## ՄՈՆՊԵԼԻԵՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

08.04.2025 15:40



2025 թվականի ապրիլի 7-ին ՀՀ փաստաբանների պալատ է այցելել Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Պիեր Լաֆոնի գլխավորությամբ:

Ողջունելով միջազգային գործընկերներին Սիմոն Բաբայանը շնորհակալություն է հայտնել ՀՀ փաստաբանների պալատ կատարած այցի համար, նշելով, որ ֆրանսիացի գործընկերների հետ ձևավորված ջերմ փոխհարաբերությունների հիմքում ընկած է երկարամյա պատմություն:

Կողմերի միջև քննարկման առանցքում են եղել ինչպես հայ-ֆրանսիական փաստաբանական ինստիտուտների հարաբերությունների զարգացման հեռանկարները, այնպես էլ մասնագիտական մի շարք հարցեր:

Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության պատվիրակությունը այցելել է նաև ՀՀ փաստաբանական ակադեմիա:

Միության նախագահ Պիեր Լաֆոնը դասընթաց է անցկացրել ՀՀ փաստաբանական ակադեմիայի փորձաշրջանի փուլում գտնվող ունկնդիրների համար «Փաստաբանների և դատավորների միջև հարաբերությունները Ֆրանսիայում» թեմայով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })